

Խորհրդի 98/24/ԵՀ հրահանգի իրականացման նպատակով՝ աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաների երկրորդ ցանկը սահմանող և 91/322/ԵՏՀ ու 2000/39/ԵՀ հրահանգները փոփոխող՝ Հանձնաժողովի 2006 թվականի փետրվարի 7-ի 2006/15/ԵՀ հրահանգ

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը,

հաշվի առնելով Խորհրդի 1998 թվականի ապրիլի 7-ի 98/24/ԵՀ հրահանգը «Աշխատավայրում քիմիական ազդանյութերի հետ կապված ռիսկերից աշխատողների առողջության պաշտպանության և անվտանգության պահպանման մասին» [1] և, մասնավորապես, դրա 3(2) հոդվածը,

հաշվի առնելով Աշխատավայրում անվտանգության, հիգիենայի և առողջության պահպանման հարցերով խորհրդատվական կոմիտեի եզրակացությունը,

Քանի որ

1) 98/24/ԵՀ հրահանգի համաձայն՝ Հանձնաժողովն աշխատողներին քիմիական ռիսկերից պաշտպանելու համար նախատեսում է առաջ քաշել եվրոպական նպատակներ՝ աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաների միջոցով, որոնք պետք է սահմանվեն Համայնքի մակարդակով,

2) այս խնդիրն իրականացնելիս՝ Հանձնաժողովին աջակցել է իր 95/320/ԵՀ որոշման [2] համաձայն ստեղծված՝ Աշխատավայրում քիմիական ազդանյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված՝ թույլատրելի սահմանաչափերի հարցերով գիտական կոմիտեն,

3) աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաները առողջության պահպանմանն ուղղված, ոչ պարտադիր նորմաներ են, որոնք հիմնված են առկա ամենավերջին գիտական տվյալների վրա՝ հաշվի առնելով չափման մեթոդների հասանելիությունը: Դրանք սահմանում են ազդեցության ենթարկվելու սահմանային մակարդակները, որոնցից ցածրի դեպքում տվյալ նյութի ազդեցությանը ենթարկվելը չի կարող որևէ վնասակար ազդեցություն ունենալ: Դրանք անհրաժեշտ են

98/24/ԵՀ հրահանգի 4-րդ հոդվածի համաձայն՝ գործատուի կողմից ռիսկերի որոշման և գնահատման համար,

4) յուրաքանչյուր քիմիական ազդանյութի դեպքում, որի համար Համայնքի մակարդակով սահմանված են աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաներ, անդամ պետություններից պահանջվում է սահմանել աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ազգային նորման՝ հաշվի առնելով Համայնքի մակարդակով սահմանված թույլատրելի սահմանային նորման, սակայն թույլատրվում է դրա բնույթը որոշել՝ ազգային օրենսդրության և գործելակերպի համաձայն,

5) աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաները պետք է համարվեն աշխատավայրում աշխատողների առողջության պահպանությունն ապահովող ընդհանուր մոտեցման կարևոր բաղադրիչ՝ ուղղված վտանգավոր քիմիական նյութերից առաջացող ռիսկերից պաշտպանությանը,

6) «Գոյություն ունեցող նյութերի ռիսկերի գնահատման և վերահսկման մասին» Խորհրդի թիվ 793/93 (ԵՏՀ) կանոնակարգի [3] շրջանակներում կատարված ռիսկերի գնահատումների արդյունքներով և մշակված ռիսկի նվազեցման ռազմավարություններով նախատեսվում է աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանների որոշում կամ վերանայում՝ մի շարք նյութերի առումով,

7) աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաների առաջին և երկրորդ ցանկերը սահմանվել են Հանձնաժողովի 91/322/ԵՏՀ և 96/94/ԵՀ հրահանգներով [4], [5]՝ «Աշխատավայրում քիմիական, ֆիզիկական և կենսաբանական ազդանյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված ռիսկերից աշխատողների պաշտպանության մասին» Խորհրդի 1980 թվականի նոյեմբերի 27-ի 80/1107/ԵՏՀ հրահանգի [6] համաձայն,

8) 80/1107/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 98/24/ԵՀ հրահանգով 2001 թվականի մայիսի 5-ից,

9) 98/24/ԵՀ հրահանգով սահմանվել է, որ 91/322/ԵՏՀ և 96/94/ԵՏՀ հրահանգները պետք է մնան ուժի մեջ,

10) 96/94/ԵՀ հրահանգն ուժը կորցրած է ճանաչվում 2001 թվականի դեկտեմբերի 31-ից «Աշխատավայրում քիմիական ազդանյութերի հետ կապված ռիսկերից աշխատողների

առողջության պաշտպանության և անվտանգության պահպանության մասին» Խորհրդի 98/24/ԵՀ հրահանգի [7] իրականացման շրջանակներում աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաների առաջին ցանկը սահմանող՝ Հանձնաժողովի 2000 թվականի հունիսի 8-ի 2000/39/ԵՀ հրահանգով,

11) հաշվի առնելով առկա ամենավերջին գիտական տվյալների գնահատումները՝ նպատակահարմար է վերանայել 91/322/ԵՏՀ հրահանգով սահմանված՝ աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաները,

12) 98/24/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածի համաձայն՝ Աշխատավայրում քիմիական ազդանյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված թույլատրելի սահմանաչափերի հարցերով գիտական կոմիտեն գնահատել է թվով 33 նյութ, որոնք թվարկված են սույն Հրահանգի հավելվածում: Այս 33 նյութերից 17-ն արդեն ընդգրկվել է 91/322/ԵՏՀ հրահանգի հավելվածում: Այս նյութերից 4-ի համար Աշխատավայրում քիմիական ազդանյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված՝ թույլատրելի սահմանաչափերի հարցերով գիտական կոմիտեն առաջարկում է սահմանել թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաներ և 13 նյութերի համար՝ պահպանել նախկինում սահմանված թույլատրելի սահմանային նորմաները: Հետևաբար, այդ 17 նյութերն այժմ թվարկված են սույն Հրահանգի հավելվածում և պետք է հանվեն 91/322/ԵՏՀ հրահանգի հավելվածից, մինչդեռ մյուս 10 նյութերը կմնան 91/322/ԵՏՀ հրահանգի հավելվածում,

13) տասը նյութեր պետք է մնան 91/322/ԵՏՀ հրահանգի հավելվածում: Նշված նյութերից 9-ի առումով Աշխատավայրում քիմիական ազդանյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված թույլատրելի սահմանաչափերի հարցերով գիտական կոմիտեն դեռևս չի առաջարկել աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային որևէ նորմա՝ մինչդեռ մնացած մեկ նյութի համար ակնկալվում է, որ մոտ ապագայում հասանելի կլինեն լրացուցիչ գիտական տվյալներ, և որ դրանք կներկայացվեն Աշխատավայրում քիմիական ազդանյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված՝ թույլատրելի սահմանաչափերի հարցերով գիտական կոմիտեի քննարկմանը,

14) սույն Հրահանգի հավելվածում նշված ցանկը նաև ներառում է 16 այլ նյութեր, որոնց համար Աշխատավայրում քիմիական ազդանյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված թույլատրելի սահմանաչափերի հարցերով գիտական կոմիտեի կողմից առաջարկվել են աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաներ՝ աշխատավայրում առողջության վրա ազդեցությունների

վերաբերյալ առկա ամենավերջին գիտական տվյալների գնահատման արդյունքում և հաշվի առնելով չափման մեթոդների հասանելիությունը՝ համաձայն 98/24/ԵՀ հրահանգի 3-րդ հոդվածի,

15) նշված 16 նյութերից մեկը՝ միաքլորբենզոլը, ներառվել էր 2000/39/ԵՀ հրահանգի հավելվածում: Աշխատավայրում քիմիական ազդանյութերի ազդեցությանը ենթարկվելու հետ կապված թույլատրելի սահմանաչափերի հարցերով գիտական կոմիտեն վերանայել է աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորման՝ հաշվի առնելով վերջին գիտական տվյալները, և առաջարկել է աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նոր նորմայի սահմանում: Հետևաբար, սույն Հրահանգի հավելվածում այժմ ընդգրկված այս նյութը պետք է հանվի 2000/39/ԵՀ հրահանգի հավելվածից,

16) որոշ նյութերի համար անհրաժեշտ է նաև սահմանել կարճաժամկետ ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային նորմաներ՝ դրանց կարճաժամկետ ազդեցությանը ենթարկվելուց առաջացող ազդեցությունները հաշվի առնելու նպատակով,

17) որոշ նյութերի համար անհրաժեշտ է հաշվի առնել մաշկի միջոցով ներթափանցելու հնարավորությունը՝ պաշտպանության հնարավոր առավելագույն մակարդակն ապահովելու նպատակով,

18) սույն Հրահանգը պետք է գործնական քայլ լինի՝ ուղղված ներքին շուկայի սոցիալական ուղղվածության զարգացմանը,

19) սույն Հրահանգով նախատեսված ակտերը համապատասխանում են «Աշխատավայրում աշխատողների անվտանգության և առողջության բարելավումը խթանելուն ուղղված միջոցառումների ներդրման մասին» Խորհրդի 1989 թվականի հունիսի 12-ի 89/391/ԵՏՀ հրահանգի [8] 17-րդ հոդվածի համաձայն ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

20) հետևաբար, պետք է համապատասխան փոփոխություններ կատարվեն 91/322/ԵՏՀ հրահանգում,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

Հոդված 1

98/24/ԵՀ հրահանգի իրականացման նպատակով՝ սույնով սահմանվում է Համայնքի՝ աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաների երկրորդ ցանկը՝ հավելվածում նշված քիմիական ազդանյութերի համար:

Հոդված 2

Անդամ պետությունները հավելվածում թվարկված քիմիական ազդանյութերի համար սահմանում են աշխատավայրում ազդեցության ենթարկվելու թույլատրելի սահմանային ինդիկատիվ ազգային նորմաները՝ հաշվի առնելով Համայնքի նորմաները:

Հոդված 3

91/322/ԵՏՀ հրահանգի հավելվածներից հանվում են նիկոտինին, մրջնաթթվին, մեթանոլին, քացախաթթվի նիտրիլին, նիտրոբենզոլին, ռեզորցինոլին, երկէթիլամինին, ածխաթթու գազին, օքսալաթթվին, ցիանամիդին, երկֆոսֆորի հնգօքսիդին, երկֆոսֆորի հնգասուլֆիդին, բրոմին, ֆոսֆորի հնգաքլորիդին, պիրետրումին, բարիումին (լուծվող միացություններ, ինչպես՝ Ba), արծաթին (լուծվող միացություններ, ինչպես՝ Ag), ինչպես նաև, դրանց թույլատրելի սահմանային ինդիկատիվ նորմաներին կատարվող հղումները:

2000/39/ԵՀ հրահանգի հավելվածից հանվում է քլորբենզոլ նյութին կատարվող հղումը:

Հոդված 4

1. Անդամ պետությունները գործողության մեջ են դնում սույն Հրահանգի համապատասխանությունն ապահովելու համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը և վարչական ակտերը՝ ուժի մեջ մտնելուց հետո ամենաուշը 18 ամսվա ընթացքում:

Նրանք, այնուհետև, Հանձնաժողովին են ներկայացնում այդ ակտերի տեքստը և դրանց ու սույն Հրահանգի հարաբերակցության աղյուսակը:

Երբ անդամ պետություններն ընդունեն այդ ակտերը, դրանք պետք է պարունակեն հղում սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով՝ դրանց պաշտոնական հրապարակման դեպքում: Անդամ պետությունները որոշում են այդ հղումը կատարելու ձևը:

2. Անդամ պետությունները Հանձնաժողով են ներկայացնում ազգային իրավունքի դրույթների տեքստը, որը նրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 5

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո քսաներորդ օրը:

Հոդված 6

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին: